ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4461-Ա « 10 » սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի Հ.3516-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 17.08.2026թ. հ.Կ-17082026-01-0199 և 18.08.2026թ. հ.ԱՏ-18082026-01-0889 տեղեկանքները, «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2026թ. տրված եզրակացությունը, ինչպես նաև հաշվի առնելով Պատրիկ Աճեմյանի և Աննա Վարդանյանի՝ ի դեմս ներկայացուցչի 19.08.2026թ. հ.Դ-88371-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 16-ի «Երևան, Արաբկիր, Այգեձորի 78ա փողոց, հ.21 հասցեում՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով քաղաքացիներ Աննա Արամի Վարդանյանին և Պատրիկ Օնիկի Աճեմյանին պատկանող և Այգեձորի փողոց, հ.78/45 հասցեում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ իրականացված կառույցներն օրինականացնելու մասին» հ.3516-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «95.18քմ» բառը փոխարինել «205.59քմ» բառով,

2) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «687676 (վեց հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր յոթանասունվեց)» բառերը փոխարինել «1485388 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր ութսունութ)» բառերով:

2. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձինք սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարեն Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գումարների տարբերությունը՝ 797712 (յոթ հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր տասներկու) դրամ:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ